European Commission against Racism and Intolerance
Commission européenne contre le racisme et l'intolérance

CRI(98)29
Version arménienne
Armenian version

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով

ECRI-ի ընդհանուր քաղաքական հանձնարարական n 3

Գնչուների նկատմամբ ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարը

Ընդունվել է 1998 թ. մարտի 6-ին

COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Secretariat of ECRI
Directorate General of Human Rights and Legal Affairs
Council of Europe
F - 67075 STRASBOURG Cedex
Tel.: +33 (0) 3 88 41 29 64
Fax: +33 (0) 3 88 41 39 87
E-mail: combat.racism@coe.int

Այցելեք ձեր վեբ սայթը . www.ecri.coe.int

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը

Անդրադառնալով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների 1993 թ. հոկտեմբերի 8-ից 9-ը Վիեննայում տեղի ունեցած գագաթնաժողովում պետությունների և կառավարությունների ղեկավարների ընդունած Հռչակագրին,

Հիշեցնելով, որ այդ Հռչակագրի շրջանակներում սահմանված ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի գործողությունների ծրագիրը կոչ է անում Նախարարների կոմիտեին ստեղծել Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով, որը լիազորված լինի մասնավորապես անդամ պետություններին ուղղված ընդհանուր քաղաքական բնույթի հանձնարարականներ մշակել,

Անդրադառնալով նաև 1997 թ. հոկտեմբերի 10-ից 11-ը Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ու կառավարությունների ղեկավարների Ստրասբուրգում տեղի ունեցած երկրորդ գագաթնաժողովի ընթացքում ընդունված Եզրափակիչ հռչակագրին և Գործողությունների պլանին,

Ընդգծելով, որ այդ Եզրափակիչ հռչակագիրը հաստատում է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների՝ ավելի ազատ, հանդուրժողական և արդարացի եվրոպական հասարակություն ստեղծելու նպատակը, միաժամանակ կոչ անելով ուժեղացնել պայքարը ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ

Անդրադառնալով խորհրդարանական ասամբլեայի՝ գնչուների հարցով եվրոպական միջնորդ նշանակելու վերաբերյալ 1203 (1993) հանձնարարականին,

Հաշվի առնելով 1994 թ. սեպտեմբերի 20-ից 23-ը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ)՝ Եվրոպայի խորհրդի հետ սերտ համագործակցությամբ կազմակերպած ԵԱՀԽ (ԵԱՀԿ) տարածաշրջանում ապրող գնչուներին նվիրված »Մարդկային ասպեկտ« սեմինարի եզրակացությունները, ինչպես նաև այս բնագավառում երկու կազմակերպությունների մշտական համագործակցությունը,

Գոհունակություն հայտնելով 1994 թ. Գլխավոր քարտուղարի կողմից գնչուների հարցերով Եվրոպայի խորհրդի գործունեությունը համակարգող պաշտոնյայի նշանակման առիթով,

Հաշվի առնելով գնչուների հարցերով Մասնագիտական խմբի աշխատանքները (MG-S-ROM),

Հաշվի առնելով անդամ պետություններին լրատվամիջոցների և հանդուրժողականության մշակույթի խթանման վերաբերյալ Նախարարների կոմիտեի N R(97)21 հանձնարարականը,

Հիշեցնելով անդամ պետությունների՝ ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ արդյունավետ պայքարին օգնելու նպատակով ECRI-ի ընդհանուր քաղաքական N 1 հանձնարարականի դրույթները, որով նրանց կոնկրետ և առանձնահատուկ միջոցառումներ են առաջարկվում նշված խնդիրներին վերաբերող սահմանափակ թվով բնագավառներում,

Խորապես համոզված, որ Եվրոպան ընդհանուր արժեքներ ունեցող հանրություն է, որոնց թվում՝ բոլոր մարդկանց հավասար արժանապատվությունը, և որ այդ հավասար արժանապատվության պահպանումը յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության հիմքն է,

Հիշեցնելով, որ Եվրոպայի պատմությունը նրան պարտավորեցնում է հիշել անցյալը, լինել զգոն և պայքարել ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության երևույթների դեմ,

Գլուխ խոնարհելով Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ռասիստական հետապնդումների և բնաջնջման քաղաքականության բոլոր զոհերի հիշատակի առջև և հիշեցնելով, որ այդ քաղաքականության զոհ դարձան նաև մեծ թվով գնչուներ,

Այդ առումով ընդգծելով, որ Եվրոպայի խորհուրդը հանդիսանում է Երկրորդ համաշխարհային պատերազմի աղետից հետո ձեռնարկված եվրոպական շինարարության հիմնադիր արժեքների մարմնավորողն ու պահապանը, որոնց թվում, մասնավորապես մարդու իրավունքների պաշտպանությունն ու խթանումը,

Հիշեցնելով, որ ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարը մարդու իրավունքների պաշտպանության ու խթանման անբաժանելի մասն է կազմում, որ այդ իրավունքները համընդհանուր և անբաժանելի են, և որ դրանք անկախ որևէ հանգամանքից յուրաքանչյուր մարդու իրավունքներն են,

Ընդգծելով, որ ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարն առաջին հերթին միտված է պաշտպանելու հասարակության ամենախոցելի անդամների իրավունքները,

Համոզված, որ ռասիզմի և խտրականության դեմ ուղղված ցանկացած գործողություն պետք է որպես մեկնակետ ունենա զոհին և փորձի բարելավել նրա վիճակը,

Փաստելով, որ գնչուներն այսօր ամենուրեք Եվրոպայում տառապում են իրենց նկատմամբ պահպանվող նախապաշարումների հետևանքով, որ նրանք հասարակության մեջ խորապես արմատացած ռասիզմի զոհ են, որ նրանք թիրախ են դառնում ռասիզմի և անհանդուրժողականության երբեմն դաժան դրսևորումների և որ նրանց հիմնական իրավունքները մշտապես ոտնահարվում և սպառնալիքի տակ են դրվում,

Փաստելով նաև, որ գնչուների նկատմամբ պահպանվող նախապաշարումները սոցիալ-տնտեսական կյանքի բազմաթիվ ոլորտներում խտրականության դրսևորումների պատճառ են դառնում, և որ դա իր հերթին բերում է գնչուների դուրս մղմանը հասարակությունից,

Համոզված, որ հանդուրժողականության սկզբունքի խթանումը բաց և բազմակարծիք հասարակությունների պահպանման երաշխիքն է, որտեղ խաղաղ գոյակցությունը հնարավոր է դառնում,

Անդամ պետությունների կառավարություններին հանձնարարում է.

- Ստորագրել և վավերացնել ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի բնագավառի միջազգային իրավական համապատասխան փաստաթղթերը, մասնավորապես Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան և Ռեգիոնալ կամ ազգային փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան,

- Հավաստիանալ, որ գնչուների տարբեր համայնքների պաշտոնապես գործածվող անվանումը լինի հենց այն անվանումը, որով տվյալ համայնքը ցանկանում է կոչվել,

- Հաշվի առնելով ռասիզմի և անհանդուրժողականության այն դրսևորումները, որոնց զոհ են դառնում գնչուները, առաջնահերթ կարևորություն տալ ECRI-ի ընդհանուր քաղաքական N 1 հանձնարարականի արդյունավետ կատարմանը, ըստ որի անհրաժեշտ է ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ, որպեսզի ազգային քրեական, քաղաքացիական և վարչական իրավունքով հստակ և հատուկ կերպով պայքար մղվի ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ,

- Հավաստիանալ, որ խտրականության, որպես այդպիսին, ինչպես նաև խտրական գործելակերպերի դեմ համապատասխան օրենքներով պայքար է մղվում և հետևել, որ այդ ուղղությամբ հատուկ դրույթներ ընդունվեն քաղաքացիական իրավունքում, մասնավորապես զբաղվածությանը, բնակարանային իրավունքին և կրթությանը վերաբերող ոլորտներում,

- Անօրինական համարել պետական իշխանության մարմինների՝ իրենց գործունեության ընթացքում թույլ տված խտրական գործողությունները,

- Հոգալ, որպեսզի համապատասխան իրավաբանական օգնություն ցուցաբերվի խտրականության զոհ դարձած այն գնչուներին, որոնք ցանկանում են իրավական պաշտպանության միջոցի դիմել,

- Համապատասխան միջոցներ ձեռք առնել գնչուների հիմնական իրավունքների խախտումներին վերաբերող հարցերում լիակատար և արագ արդարադատություն իրականացնելու նպատակով,

- Հետևել մասնավորապես, որպեսզի գնչուների նկատմամբ գործված որևէ հանցագործություն անպատիժ չմնա, այդ մասին իրազեկելով հասարակության ամենալայն զանգվածներին,

- Արդարադատություն իրականացնող տարբեր ատյաններում հանդես եկող անձանց համար կազմակերպել և աջակցել հատուկ ուսումնական դասընթացներ՝ նրանց ուշադրությունը հրավիրելով մշակութային տարբերությունների և գոյություն ունեցող նախապաշարումների վրա,

- Խրախուսել ոստիկանության, իշխանության տեղական մարմինների և գնչուների համայնքների միջև երկխոսությանն ուղղված համապատասխան միջոցառումները,

- Զանգվածային լրատվամիջոցների՝ թե լսատեսողական և թե տպագիր մամուլի աշխատողների ուշադրությունը հրավիրել այն առանձնահատուկ պատասխանատվության վրա, որ նրանք կրում են, այն է՝ իրենց մասնագիտական գործունեության ընթացքում չդառնալ նախապաշարումների խոսափող, մասնավորապես հրապարակելով գնչուական համայնքի ներկայացուցչի մեղսակցությունը որևէ գործում, այդպիսով ողջ համայնքի վրա դնելով արարքի պատասխանատվությունը,

- Անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, որպեսզի քաղաքացիություն ձեռք բերելու իրավական և փաստացի կանոնները և ապաստանի իրավունքի հարցը այնպես մշակվեն և կիրառվեն, որպեսզի հատուկ խտրականություն չառաջացնեն գնչուների նկատմամբ,

- Հետևել, որպեսզի երկրի ներսում »ճանապարհորդելու« հարցերը, մասնավորապես բնակարանի և քաղաքաշինության հետ կապված կանոններն այնպես լուծվեն, որպեսզի խոչընդոտներ չստեղծեն համապատասխան անձանց համար,

- Ստեղծել հաստատություններ, որոնք նպաստեն որոշումներ կայացնելու գործընթացում գնչուական համայնքների ակտիվ դերին և մասնակցությանը, մասնավորապես պետական, շրջանային և տեղական մակարդակներով խորհրդակցական մեխանիզմներ և այս շրջանակներում նպաստել իրավահավասար գործընկերության հաստատմանը,

- Հատուկ միջոցներ ձեռք առնել գնչուների ուսուցումը խրախուսելու՝ իրենց իրավունքների ծանոթացման և իրականացման նպատակով, ինչպես նաև հատուկ ուսուցում իրավական համակարգի գործունեության վերաբերյալ,

- Հատուկ ուշադրություն դարձնել գնչու կանանց վիճակին, որոնք հաճախ կրկնակի խտրականության զոհ են դառնում՝ որպես կին և որպես գնչու,

- Անզիջում պայքար մղել դպրոցում գնչու երեխաների նկատմամբ խտրականության դրսևորումների նկատմամբ և ապահովել կրթության իրական հասանելիությունը,

- Ապահովել բոլոր դպրոցների ուսումնական ծրագրերում գնչուների պատմության և մշակույթի վերաբերյալ տեղեկությունների ներառումը, ինչպես նաև այդ ուղղությամբ ուսուցողական ծրագրեր կազմակերպել դասավանդողների համար,

- Սատարել ոչ կառավարական կազմակերպությունների ջանքերը, որոնք կարևոր դեր են կատարում գնչուների նկատմամբ ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարում և որոնք մասնավորապես նրանց համապատասխան իրավաբանական օգնություն են ցուցաբերում,

- Քաղաքացիական հասարակության ամրապնդման նպատակով խրախուսել գնչուական կազմակերպություններին՝ նրանց հորդորելով ավելի ակտիվ դեր կատարել,

- Խաղաղ գոյակցությանը միտված բաց և բազմակարծիք հասարակությունը պահպանելու և ամրապնդելու նպատակով փոխադարձ վստահության միջոցառումներ իրականացնել :